



Պատրիարքին խնդրանօրը Օտեան էֆէնտիի չը-  
րածն ու ընել չուզածը ըրած ու հրապարակ ի-  
ջաւ:

Մէք ասոր այսպէս ըլլալը գիտնալով հանդերձ  
ընաւ այս մասին վրայ դիտողութիւն չըրինք և  
խնդրոյն այդ մասը լուռութեամբ անցանք և դարձ-  
եալ նոյն ընթացքը պիտի բռնէինք: Եթէ Օտեան  
էֆէնտիի հանրածանօթ խնկարկու Մասիսը՝ մեզ  
չը պարտաւորէր մեր լուռութեան կապը խզելու իւր  
խմաստակ ու չըպիտոյ դիտողութիւններովը:

Սա առաջին անգամ էրաւ, այս կանոնագիրը  
եա ձգել տալու համար Ընդհ. ժողովոյ դիւանին  
վրայ ատենական կանոնագիր մը կայ արդէն բե-  
լով, նախադասութեան խնդիր մը յորոցց, մէք  
լուռ կեցանք ասոր դէմ, վասն զի տեսանք որ  
թէ և Մասիս քսութեամբ է որ այս խնդիրը կը  
յարուցանէ, բայց ատենական կանոնագիր մը դի-  
ւանին վրայ կենալով վիճարանութեան տակ ըլ-  
լալը կընդունի, որով այս կամ այն կերպով Ընդհ.  
ժողովոյ անկարգութեանց վերջ տալու սկզբունքը  
յարգուած կըլլայ. սակայն Մասիս՝ ալ աւելի  
յառաջ կանցնի և այդ կանոնագրին ընդունուիլը  
կամ չընդունուիլը Սահմանադրութեան վերա-  
քննութեան հետ կը կապէ կապ մը՝ որ քակուե-  
լիք չունի, եթէ Երեսփոխանք միամտաբար ան-  
գամ մը իյնան այդ ծուղակը և այդ կապին ձեռք  
զարնեն կապ մը՝ որ Ընդհ. ժողովոյ վիճարա-  
նութեան ազատութիւնը կը կաշկանդէ անկար-  
գութեանց տակ կապ մը՝ որ Ընդհ. ժողովոյ գո-  
յութեանը մահ կսպառնայ, զայն սրիկայական  
ճնշմանց տակ թաղելով. կապ մը վերջապէս՝ որ  
Սահմանադրութիւնը յանուն վերաքննութեան  
ընաչինջ ընելու չափ գորութիւն ունի:

Ասոր պատասխանը Ռուսինեան էֆէնտի թէ և  
տուաւ մեր թերթին մէջ դեռ Մասիս իր այդ դի-  
տողութիւնը չը հրատարակած, ուղղեալ անոնց՝  
որք հրամայած էին իրենց ծառայ Մասիսին այդ-  
պիսի դիտողութեամբ մը մտքերը պղտորելու և  
որմէ հասկցուեցաւ թէ՛ ո՛վ է այդ կանոնագրին  
խնդրոց կարգէն անուղղապէս նետուիլ ու զող մար-  
մինը սակայն հարկ է որ հարցնենք Մասիս թէ՛  
ի՞նչ վնաս ունի մէկ քարով երկու թռչուն գար-  
նելը, եթէ իրօք այդ կանոնագրութիւնը Սահմա-

նադրութեան վերաքննութեանը հետ կապակցու-  
թիւն ունի, և ասոր ընդունուելովը Սահմանա-  
դրութեան վերաքննութիւնն ալ կատարուած պի-  
տի ըլլայ:

Եթէ էլ այդ կանոնագրութեան մէջ Սահմա-  
նադրութեան հիմնական սկզբանց դպչելու կէտեր՝  
դարձեալ այդ մէկ քանի կետերուն համար, որք  
թերեւս սխալմամբ սպրդած ըլլան, խնդրոց կարգէն  
գուր ձգելու հարկ չը կայ այլ կրնան այդ սկզբ-  
բունքի վերաբերեալ կետերը զատուելով փոփո-  
խուիլ և այնպէս ընդունուիլ:

Ըսեն թերեւ՝ թէ այդ կանոնագիրը Սահմա-  
նադրութեան վերաքննութեան հետ կապուելով,  
անուղղապէս խնդրոց կարգէն գուրս նետուած չըլ-  
լար:

Ընդհանրապէս կըսենք՝ այդ խնդիրն Սահմա-  
նադրութեան վերաքննութեան խնդրոց հետ կա-  
պելով երկու խնդիր միանգամայն խնդրոց կար-  
գէն գուրս կը ձգուի:

Ահաւասիկ բուն իսկ Մասիսի խօսքերը:  
«Այս կանոնագրին քննութիւնը Սահմանա-  
դրութեան վերաքննութեան հետ անբաժանելի  
«կապակցութիւն ունենալով, Ընդհ. ժողովոյ  
«գործն աւելի կը դժուարանայ երբոր ծրագրն  
«անբաժանելի էր իրոյ առաջ»:

Ասով՝ եթէ այդ կանոնագիրը Սահմանադրու-  
թեան վերաքննութեան հետ մեկ տեղ Ընդհ.  
ժողովոյ խնդրոց ցանկէն գուրս նետուի չը հասկց-  
ւիր, հապա ի՞նչ կը հասկցուի Եւ հետեւաբար  
ասով եթէ Ընդհ. ժողովը տակաւին երկար  
ժամանակ անկանոն վիճակի մէջ պահել չըճակ-  
ցուիր ուրիշ ի՞նչ կը հասկցուի:

Լաւ է զէջ օրէնք մը ունեննելը, քան ընաւ  
օրէնք չուննելը. Ասոր այսպէս ըլլալը նոյն իսկ  
Օտեան էֆէնտի խոստովանած էր իւր տեղեկա-  
բեր քննիչ Յանձնաժողովոյ իւր տեղեկագրին մէջ:

Արդ Ընդհ. ժողովիս իւր ատեանը կառավա-  
րելու օրէնք չունի:

Ի՞նչ ընել պէտք է այսպիսի վիճակի մը մէջ  
երբ ատեան ունինք ու զայն կառավարելու օրէնք  
չունինք:

Եթէ կարելի է առանց օրէնքի կառավարուիլ,  
ընաւ հարկ չէ այդպիսի օրէնք մը ունենալ, իսկ

կարելի չէ առանց օրէնքի կառավարուիլ, այս-  
քէն ո՞րպիսի օրինաւոր կառավարութեամբ պիտի  
շարունակես վիճարանութիւնդ այդ ատենական  
օրէնքն ընդունելու:

Հանելուկ մ'է այս որ կարելի չէ ուրիշ կեր-  
պով լուծել, բայց եթէ ընդունելով օրէնք մը  
խիստ կարճ վիճարանութեամբ անոր ընդհանուր  
տրամադրութեան վրայ զայն հետզհետէ փոր-  
ձառութեամբ վերաքննելու պայմանաւ, զի լաւ է  
ունենալ պէշ օրէնք մը՝ քան բնաւ օրէնք չունե-  
նալ: Հետեւաբար կը զարմանանք որ՝ Օտեան է-  
ֆէնտի գէթ Մասիսի չը հրամայեր որ իւր այդ  
յայտնած ճշմարտութիւնը պաշտպանէ և Ընդհ-  
ժողովը կանոնաւորութիւն մը ստանայ:

Օրագիր. Թի. 1351 Սեպտ. 17:

Ահա այս խնդիր է՝ որ Հոկտ. 4ին  
Պոլսոյ Հայոց Ազգ. Երեսփոխանական  
Ժողովոյ մէջ լուծուած է՝ ինչպէս կտես-  
նուի Փոփոքէն քաղուած հետեւեալ ան-  
դիկութեան մէջ:

Երեսփոխանական ընդհ. ժողովն երէկ (Հոկտ. 4)  
ժամը 7<sup>1</sup>/<sub>2</sub> ին ատենները Նիստ ընելով Պումպարուի  
Պատրիարքարանին մէջ, նախագահութեամբ ամեն  
Ս. Պատրիարք Հօր, ատենագիտութեամբ վսեմա-  
փայլ Յարութիւն պէյի Տատեան և ստօրեայ  
ատենագրութեամբ Մէյրէմյուլի Յարութիւն է-  
ֆէնտիի, յետ ինչ ինչ գիտողութեանց՝ ընդհա-  
նուր հաւանութեամբ ընդունեց ու վաւերացոյց  
իւր ներքին կանոնադրութիւնը, կարևոր եղած  
սրբազրութիւններն կամ փոփոխութիւններն հա-  
րզհետէ ընկու պայմանաւ:

Ժողովը շնորհակալութիւն մատոյց ամեն Ս.  
Պատրիարք Հօր և Առաջնեան էֆէնտիի այս կա-  
րևոր կանոնադրութեան պատրաստութեան հա-  
մար որով ազգային ժողովն այսուհետև ուղեցոյց  
կունենայ առաջի իւր յորմէ ցարդ զուրկ լինե-  
լով յաճախ կատարման:

Ի վերջոյ թէ մայրաքաղաքիս և թէ քանի մը  
գաւառաց կողմանէ կատարուած երեսփոխանական  
ընտրութիւնք վաւերացան: Քրիստոստուր էֆէն-  
տի Ղազարոսեան՝ որ Աշխիկձաշի և միանգամայն

Պրուսայի կողմանէ ընտրեալ էր վերջինը ընդու-  
նեց:

Ատեանը զոցուած չէր և ահա ամեն Ս. Պատ-  
րիարք Հօր մատուցին հետագիր մը Նորին Արք-  
բագնութիւնը՝ որ ատեանը բացուած ատեն հա-  
կիրճ՝ բայց խիստ ազգու կերպիւ մեր գաւառարնակ  
ազգայնոց բազմաց ներկայ աղետալի վիճակը ծա-  
նուցանելով ի կարեկցութիւն և յօդուութիւն հը-  
րաւիրած էր զԺողովն, յանկարծ արտասուօք ծա-  
նոյց թէ առ ձեռն հետագիրն Էնկիւրիէն եկած է  
և բազմութիւ ազգայնոց բազու՛ր օրերէ հետէ  
խոտաճարակ և մահամերձ վիճակի մէջ գտնուիլը  
զուեկով՝ անպապա օգնութիւն կինդրէ: Համայն  
ժողովականք տխրեցան այս գոյժն լսելով՝ և ինդ-  
րեցին Ս. Պատրիարք Հօրէն որ իսկոյն յանձնա-  
ժողով մը կազմէ և հանդանակութիւնը նախ  
երեսփոխաններէն սկսուի \*):

Ատեանը զոգուելէն անմիջապէս յետոյ Նորին  
Արքագնութիւնը փութացու անուանել յանձ-  
նաժողովն և այսօր կակտի հանդանակութիւնը:

Չեմք կարծիր որ բոլորովին աւելող համա-  
րուի նշանակել թէ կանոնադրութեան շարագրու-  
թեան վրայ ալ դիտողութիւն ըլլալով՝ որոշուե-  
ցաւ մասնաժողովոյ մը միջոցաւ սրբազրել, ինչ-  
պէս արդէն նոյն իսկ կանոնադրութիւնն ալ տը-  
րամադրած է:

Այս անգամ ունկնդրութեան համար բազմա-  
թիւ ժողովուրդ չկար՝ անշուշտ նկատելով թէ  
խորհրդարանը չտանիր, և մասնաւանդ փափաքելով  
որ ժողովն առաձին մնայ և յանդորրու խորհր-  
դակցի:

Ի վերջէ, պարտ կհամարիմք մեզ՝ հրապարակու  
իսկ շնորհակալութիւն մատուցանել Տատեան վե-  
սեմափայլ Յարութիւն պէյի որ ժողովին օրի-  
նաւորութիւնն ու ներգաշնակութիւնը մինչև ցը-

(\*) Եողատի բաժնայք ալ, տեղոյն սովալուկ ազգայնոց թշուա  
վիճակին նկարագիրը դրկելով Պատրիարքարան, անպապա օգնու-  
թիւն խնդրեք են:

Պատրիարքի մէջ ալ հազարաւոր ազգայինք լսած ըլլալով, թէ  
Պատրիարքարանը իրեանց համար հանգանակութիւն ընել որոշած  
է, դէտակն կպատան:

Յունաց Պատրիարքարանը արդէն երկրորդ հանգանակութեան  
մեծարկած է յօդուութիւն կարօտեւոց Էնկիւրիի:

վախճան անխանգար պահելու համար փոյթ տա-  
րաւ և արգելեց յուղիչ շարժումներն:

Յաջորդ նիստը՝ 15 օրէն յետոյ պիտի ըլլայ:

Փետի Թ. 225. Հոկտ. 5.

Ի ՊՐՈՒՍՏՅԷ.

Օրաճէջ լրագրոյ 1357 թիւ թերթին  
մէջ (Հոկտ. 7) հետեւեալը կրն՞ թեւնումք:

Պրուսայէն հետեւեալը կը գրեն մեզ հոկտ. 2  
թուով:

Անպտեմբերի 28-ին Պրուսայի մէջ ըսա սոփո-  
րութեան Ա. Ե. Գէորգ Գ. Վաթուղիկոսին ասնա-  
խմբութեան տարեդարձի հանդէսը կատարուեցաւ:  
Որոյ անուամբ և ջանիքը կառուցեալ է նաև սոյն  
քաղքին ազգային վարժարանը\*): Նոյն օրն Ա. Ե. Գ.  
Հայրապետին բարերջանիկ կենացը յարատևու-  
թեան համար գոհարանական աղօթքէ մը յետոյ,  
բովանդակ եկեղեցական պաշտօնեայք և զպիրք  
աշակերտաց և աշակերտուհեաց ընկերակցու-  
թեամբ և Գեր. Բարդուղիմէոս սրբազանի ա-  
ռաջնորդութեամբ երգօք և նուագօք ի վարժա-  
րան կը դիմեն ուր Ազգայնաց խումն բազմու-  
թիւն մը արգէն գտնուելով կսպասէր Յետ խա-  
չահանգստի և աղօթից, ի պատիւ Ա. Ե. Գ. Վաթու-  
ղիկոսի յօրինեալ երգէ մը վերջը, աշակերտաց  
կողմանէ մէկ քանի ճառախօսութիւններ եղան,  
այլ և այլ երգերով ընդմիջեալ, յորմէ յետոյ  
Գեր. Արքայան Առաջնորդ Հայրը գեղեցիկ և ազ-  
գու ատենարանութեամբ մը, յորում ցոյց կու-  
տար թէ բովանդակ Ազգին օգուտն ու ապագայն  
տղայոց լաւ կրթութիւն մը տարուն մէջ կը կայա-  
նայ, կնքեց հանդէսը՝ բոլոր հանդիսականք գոհ և  
ուրախ սրտիւ իւրարանչիւրն իւր տեղը դառնալով:

(\*) 1862 թուականին այրուելով Պրուսայի մեծ հրկիզու-  
թեան մէջ նաև Եկեղեցին, երկօտ գոյրոցն և Առաջնորդա-  
րանն, 65—66 թուականաց մէջ Ա. Ե. Գ. Հայրապետ տեղւոյն  
Առաջնորդ լինելով՝ Պրուսայի և այլ տեղեաց Հայոց նպատակք  
և եկեղեցւոյ արդեամբք ի նորոյ շինեց ինչպէս հայկապ և  
եռայարկ ուսումնարանը, նոյնպէս գեղեղեցին և զԱռաջնոր-  
դարանն հանդերձ այլովք շինուածովք:

Ման. Խմբ. Արարատայ.

Այս հանդիսի մէջ ընթիւրցեալ հետե-  
ւեալ ճառը ևս Հայրենիք լրագրոյ 220 թ  
թուէն քաղելով կհրատարակեմք:

Տեսքը իմ.

Ինչ բարերաստիկ վայրկեան, բացատրելու այսօրուան իմ ըզ-  
գացած ջերմ համակրութեանս հաւատին, զոր ունիմ Ս. Գէոր-  
գեան վարժարանիս նկատմամբ, այժ այսօր վարժարանս այնպիսի  
դիրքի մը մէջ կսեանուի, որ կարծեմ թէ ոչ որ կրնայ ներքին  
զորմար արտուպտոշանք գովեստն վարդալ. թէ եւ ասի իրա-  
ւաբարձորութեանից արժանի կդատին, բայց այսու եւ եթ չեմ կրնար  
անտարբեր մնալ առանց այն դիտողութիւննս հոս ջեզ հազարից-  
յու թէ «վարժարանը ազգի մը գոյութեան» էական եւ կենսական  
տարրն ըլլալով, նորա մէջ է մէն մի անհատի ոյժն ու կեանքն,  
յայտն ու երջանկութիւնը, նովաւ է ազգի մը անկումը, եւ նովաւ  
է ազգի մը կանգնումը, վերցնալ զայն մէջ տեղէ, եւ անհ կոր-  
ծանաւն կատակները կնքեցիր այն ազգին կամ ժողովրդեանս,  
այս պատճառաւ որքան ջանք և ջարդեր զոյժը նորա յառաջա-  
դիմութեանն, այնքան աւելի կիրկնապատկի մեր փառքն ու պար-  
ծանքն. որքան քրտուքը քամէք հոն, կանին ու կարգաւանին բու-  
սած ժողովուրդն: Տեսքը իմ, մի խաբարիք թէ մեր գծեզ շողմե-  
լու համար հրապարակ կենտուխիք այսօր, այլ այն անուրանալի  
ճշմարտութիւնը խոստովանելու, որ անհրաժեշտ պարտքերիս է.  
եթէ այսօր վարժարանուս դիրքը կզոյժեմք, առանց յիշելու չէ թէ  
որքան արգելքներ եւ խոչընդոտներ կպատահին մեր վսեմ նպա-  
տակի ճամբան մէջ. ցարդ ամենարագ կուրծք պատրաստած այն  
բոլոր խոչընդոտներուն դէմ հակադիմիլ չուարեցաք, ուստի մեր-  
տենեոյ արժանի պատկերն ընդունելու մեր վեճ ճակտին նախան-  
մնի քողիցն արժանաւարտութիւնն ունեցած էք. ինչ մեծ տիպաւս,  
ինչ սրանչելի պարծանք յախանեալիս յիշատակաց արժանի, ու-  
րեմն խրախոյս առէք, թշուառ ազգի մը ապագայն վերակենդա-  
նացնելու յոյս տուող մանկտեաց վարժարանիս տարեդարձին աւ-  
թիւ այս օրուան ներկայացուցած սրտաշարժ հանդէսը տեսնելու  
երջանիկ ուրախութիւն վայելած էք, ինչպէս երբեմն. հաւատի  
եմ որ օր մալ մեր քրտնաթար աշխատութեան արդիւնը ու պը-  
տուղը ջեզ եւ սիրելի ազգիս ընծայելու մեծ բարերարութիւնը  
պիտի ունենամք:

Վարժարանիս բարեբար հիմնադիր Տ. Տ. Գէորգեայ բազմե-  
րախտ Ա. Ե. Գ. Հայրապետին վրայ գովեստ տալ չհարկաւորիք, լան-  
զի իւր սրանչելի գործոցն հոյակապ յիշատակները ճշմարիտ աղ-  
գասիրաց արտերէն անճեռանալ երբէք կարելի չէ, եւ նոյնը ան-  
ջնջելի պարծանք կնուիրէ ապագային, այս հոյաշէն վարժարանիս  
(որոյ անուամբ իսկ կառուցեալ է) սանունը երախտապարտ ըլ-  
լանիս ջիւղմ փափաքանօք կխոստովանին, եւ յաւէտ կենդանի  
սրտով ու բերնով կօրնենն ու կբարձրացնեն անմահ Հայրապետին  
կենսատու եւ նուիրագործ յիշատակը, կեցցէներ գոչելով նորա  
ազգոզուտ կենացն անդադար: Ասկէ դատ բոլորով սրտի երախ-  
տապարտ եմք մ աղնիւ Պրուսացիք, այսօր մեր բարեխնամ Ա.  
առաջնորդին գերերջանիկ Հօր Բարդուղիմէոս բարձր Արքա-  
զան Եղիակոպոսի, որոյ թանկագին բարերարութեանց գողար շը-  
նորճները ցարդ վայելած ենք, կվայելեմք, եւ պիտի վայելեմք:  
Նորին գերապատուութեան մասնատրապէս վարժարանուս յա-  
ռաշալիմութեան մտպին եռանդնալից համակրութիւն ու սրտա-  
տալր փափաք մ ունենալը ամենուս յայտնի է, եւ չուրացուիր  
այ երբէք որ իրեն արդարակորով ջանից ճեռնուտ եւ աշակից-  
ներ չեն պակած եւ չեն պակիրք. զխաւարարար աղգ. ուսում-  
նական եւ թաղ. Խորճողոց պատուարժան անդամը անգուլ հսկո-  
ղութիւննին եւ աշխուրջ ինամածութիւննին չեն դացած ցայսօր:  
Արքազան Հօր միակ նպատակի ու բազմանաց առարկան է ազգ-  
վարժարանս եւ անոր մէջ ուսանող 500—600 ի չափ մատուղ  
հայ մանկուցն արդարայ վիճակին զօրոգացումը ու յաջողութիւնն:

իւր բուն նպատակի եւ ոգոյն հաւատանց նշանաբան կրնայ հանդիսանալ սա ազգու եւ ջերմ խօսքը, զոր շրթուներ իւր արտասանած է թէ «կամ մեռնելու եմ, կամ վարժարանի յառաջագիմուքիւնը տեսնելու համար ապրելու եմ» . կղեղեղեմք զայն քիւրուցս բիր, եւ ի պատիւ անմահ արժանեաց անմտաց ու հոյակապ արձաններ կրտսրացնենք մեր սրտից խորերուն վրայ, կնցդ նա, եւ փոխարէն իւր աննկուն ջանից քաջալերուի, զի արդի հայ սերունդը թմբակ եւ անտարբեր չէ, այլ եռանդուն եւ գործող . կկրկնեմ խօսքս թող քաջալերուի եւ անվճատ գործէ ինչ որ է նպատակը, եւ ճուշկ պատրաստուի իւր կենդանի ճշգրտաց եւ յաղթութեանց արիւնտոս դափնիի նոցա մեքերէն ընդունելու :

Հայրենեք թիւ 220, Հոկտեմբ. 8.

**Գ. Ի. Գ. արքիէպ. Արքեպիսկոպոս Այվազեանցի եղբայր եւ նշանաւոր նկարիչ Պ. Յովհաննէս Այվազովսկոյ վերայ՝ որ յանցելումն ի Պօլիս ուղևորած էր՝ հեռեւեալ բերկրառիթ տեղեկութիւնքը կքաղիմք եւ կհրատարակիմք :**

**Ա Ն ՈՒ Ա Ն Ի Հ Ա Յ Պ Ա Տ Կ Ե Ր Հ Ա Ն Ը .**

Պօլսոյ մէջ վերջին օրերս մարդ չի մնաց որ չիլսէ թէ, Այվազովսքի Յովհաննէս Էֆէնտի անուանի Հայ պատկերահանը Պօլիս եկած է, Վեհ. Սուլթանին ներկայացած \*) եւ սիրալիր ընդունելութիւն գտած եւ Օսմանիէի երկրորդ չքանշանին արժանացած է :

Եւրոպական թերթերու եւ բարձր ընկերութիւններու մէջ այս անուանի պատկերահանին նկարները կը խօսուին . եւ ամեն տեսողներ կը վկայեն եւ կը հաստատեն թէ գմայշչի եւ հիանալի են :

Ասանկ հանճարի մը Հայ ըլլալը մեծ պատիւ եւ պարծանք է ամենուս . բայց եկուր տես որ Հայը այս պարագային մէջ ալ անմխիթար ծղել կուզեն :

Եւրոպացիներէն ոմանք արատ կամ բիծ եւ կամ քննադատելու փոքրիկ կէտ մը անդամ չկրնալով գտնել Այվազովսքի նկարներուն մէջ, սկսան բերաննուն ջուրը վազցնել, եւ բան չգտան նէ, ելան այնպէս հոչակել թէ, Այվազովսքի հայ չէ, այլ Ռուս մը :

Նոյն իսկ Ռուսաց վկայութիւնն ալ իրենց համար թերեւս հասնի չըլլայ, որովհետեւ անոնք ալ կաղա-

(\*) Արքունական ճարտարապետ Պալեան Վսեմ. Պարզիս պէն ներկայացուցած է, եւ այս առթիւ մի եւ նոյն շքանշանը ի միասին ընդունած :

ղակեն թէ Այվազովսքի Հայ մ է, եւ 70 տարիէ ի վեր Հայ, ի ծնէ Հայ եւ նոր անուանի եղած չէ, այլ 40—50 տարիէ ի վեր անոր համբաւը տարածուած է, եւ համայն Եւրոպիոյ արքունիքներուն մէջ, բարձր զահիլճներու եւ արուեստահանդէսներու մէջ լի են անոր այք զրաւող, զիտողին միտքն ու հողին յափըշտակող նկարները . եւ ամենէն ալ վկայեալ եւ հաստատեալ է թէ Այվազովսքի Հայ պատկերահանին վրձինը աշխարհիս վրայ եՁԱԿԱՆ է, եւ իր վրձինին յիշատակներովը յախտեան անմահ պիտի մնայ իր անունը, փառք՝ ինքեան եւ պարծանք Հայուծեան :

Մտնուլ թ. 422, Հսկտ. 42:

**Մահոյ յաջորդ թերթի մէջ Լս հեռեւեալ տեղեկութիւնը ընթերցանք եւ արժան համարեցինք մեր ընթերցողաց հազորդելոյ :**

Արքունական հրաւերներու եւ իշխանական ընդունելութիւններու մէջ ճոխացող անուանի Հայազգի պատկերահան Յովհաննէս Էֆէնտի Այվազովսքի այս կիրակի Վսեմ. Սարգիս պէլի տանը մէջ հասցեալ իր ներկայութեանն սիրալիր կերպով ընդունել Կ. Պօլսոյ մէջ գտնուող հայազգի պատկերահանաց մէկ պատգամաորութիւնը, որ հետեւեալ ուզերձը մատոյց նորին Վսեմութեան :

«Վսեմափայլ եւ չքնաղահամճար Տէր, «Գիտեմք որ Եւրոպիոյ ամեն թագաւորներէն Ձեր վեհ ճակտոր դափնիներով պատկուած է, եւ յաղթանակի մրցանակներով կուրծքերնիդ ծածկուած : Գիտեմք որ տիեզերական զովտատնութեամբք եւ պատուովք այնչափ կշտացած եւ լցուած էք՝ որ ալ ուրիշ մեծութիւն մը Ձեր վրայ հրապոյր մը չունի :

Սակայն գիտեմք նաեւ որ Ձեր վսեմ եւ ազգասէր սրտին մէջ միշտ տեղ մը բաց է իրեն արիւնակից եղող Հայ արուեստաւորաց անկեղծ խնդակցութիւնը ընդունելու՝ որ այսօր եկել է Ձեզ բարեմաղթել :

Արդարեւ ինչպիսի մեծ բարերազողութիւն է մեզ մեր ուրախութեան զգացումը յայտնել Ձեզ՝ որուն համբաւն ու փառքը բոլոր Հայկազեան ազգիս վրայ կը տարածուի :

Այո, Հայ ազգը բոլոր աշխարհիս առջեւ կը պանծայ Ձեզմով, վասն զի բնութեան հիանալի տեսարա-

նաց անլուծելի գաղտնիքը պարզեցիք եւ ամենաճարտար վրձիններն անգամ շփոթութեան մէջ թողուցիք:

Ուստի մեր կրկին ուրախակցութեան, ազգակցութեան սիրոյ եւ խորին մեծարանաց հաւաստիքը Ձեզ մատուցանելով մնամք,

Անձնուէր ծառայք եւ հանճարոյդ սիրահարք

Գեորգ Ապտուլան	Տեղեմուք Էնքուէրճեան
Վելեն Ապտուլան	Յովսէփ Սամանճեան
Մելքոն Տիրացուեան	Յովսէփ Չէրաշեան
Մկրտիչ Մեւրեան Գեղեցեան	

15|25 Հ. 1874:

Ղսեմախայլ Յովհաննէս Էֆէնտի Այվազովսի Ռդերձն ընդունելով, հետեւեալ իմաստալից պատասխանն ուղղեց, որն որ գրեթէ բառ առ բառ ճշգրտութեամբ ըմբռնուած, եւ յետոյ խմբագրուած է ներկայ գտնուող Հայ պատկերհանին մէկուն սուր յիշողութեամբը:

« Շատ շնորհակալ եմ այսօրուան ձեր բարեմաղ-  
 « թութիւններէն. սակայն ես երբէք այսչափ պատուոյ  
 « չեմ արժանացած: Եթէ Աստուած քիչ մը կարողու-  
 « թիւն ինձի տուեր է, գիտցէք որ անդու աշխատան-  
 « քով կրցեր եմ ձեռք բերել. այսու ամենայնիւ դեռ  
 « աշակերտ եմ բնութեան եւ միշտ սորվելու հետ.  
 « վասն զի Աստուծոյ ստեղծած բաներն այնքան շատ  
 « եւ աննկարագրելի են, որ եթէ 500 տարի ալ ապ-  
 « րելու ըլլամ, միշտ նոր բան մը պիտի տեսնամ շի-  
 « նելու համար: Շատ թշնամութիւններ եւ շատ նա-  
 « խանձորդներ ունեցած եմ կեանքիս մէջ, որոնք  
 « լրագրաց միջոցաւ դիս առնջած են. սակայն երբէք  
 « վնասած չեմ. իմ միակ միսիթարութիւնս կտան եւ  
 « վրձինս էր. այն տեղ կը մուռնայի բոլորն ալ: Բէթ-  
 « րըսպուրկի Աքատէմիան եղած ժամանակս քանի  
 « մը Խտալացի ընկերներ ունէի, որոնք ինձի հետ կոշ-  
 « խատէին. խել մը ժամանակէ վերջը անոնցմէ մին  
 « տեսայ, հարցուցի թէ ինչ կընես. ան ալ ինձի պա-  
 « տասխանեց զանգատելով թէ գործ չկայ, բան մը  
 « ապսպրող չկայ, անոր համար պարսպ կը պտըտիմ:  
 « Ինչո՞ւ համար կսպասես, ըսի իրեն. որ քեզի գործ  
 « ապսպրեն. մենք ամենեւին ժողովրդէն զանգատե-  
 « լու իրաւունք չունինք, եթէ մեր կողմանէ կատար-  
 « եալ աշխատութիւն չըլլայ. շինէ նախ եւ առաջ ա-  
 « դէկ բան մը, եւ մի վախնար, զանկալ ուզող եւ  
 « ծանր դնով առնող շատ կը գտնուի: Շատ անգամ

« իմ շինածներս միւղէներու մէկ անկիւնը դրուած  
 « են, սակայն զարմանքով կը տեսնէի որ ժողովուրդը  
 « մէկէն զանի կը գտնար եւ կը դիտէր. Ռուսերէն  
 « առած մը կայ որ կըսէ, այժ ժողովուրդին այժ Աս-  
 « տուծոյ: Քառասուն տարի է որ կաշխատիմ, եւ  
 « 5000 կտորի չափ պատկերներ շիներ եմ, որոնց  
 « հազիւ 200 հատը ապսպրուած են ինձի: Շատ ու-  
 « թախ եմ որ Վ. Սուլթանն իրեն ընտիր ճաշակովը  
 « եւ հասկացողութեամբը կը քաջալերէ պատկերահա-  
 « նութեան արուեստը. դիտեցի որ ինքն Սուլթանն  
 « իսկ կը հաւնէր իմ պատկերներուս այն կէտերուն,  
 « որոնց ես հաւնած եմ: Ուրեմն դուք ալ ջանացէք,  
 « աշխատեցէք այս պարագայէս շատ քաջելու: Ռ-  
 « թախութեամբ կը տեսնեմ որ Հայերը քիչ ժամա-  
 « նակուան մէջ շատ յառաջ դացիր են արուեստներու  
 « մէջ, մանաւանդ ճարտարապետութեան մէջ. օրինա-  
 « կի համար, Սարգիս պէլլին կառուցած պալատները  
 « հիանալի են, եւ որ եւ իցէ արուեստաւոր անոր  
 « գեղեցիկ ճաշակին պիտի դմայի: Կուզէի ձեզի փո-  
 « խաղարձաբար խրաքանչիւրիդ այցելութիւն տալ,  
 « բայց Պօլսոյ մէջ այս մասին եղած դժուարութեանց  
 « եւ իմ տկարութեանս պատճառաւ ձեր ամենուր նե-  
 « քողամտութիւնը կը խնդրեմ: »

Ներկայացող պատկերահանք մեծ ուրախութեամբ եւ սխիթարութեամբ, եւ այցելութեան սրահին մէջ Այվազովսի վրձինին արդիւնքն եղող 44 կտոր նկարներուն վրայ հիացմամբ լցուած, բաժանուեցան այս տեսութեան յիշատակն անջինջ պահելով իրենց սրտին մէջ, նորին վեմութեան խրախուսալից խօսքերէն աւելի ոյժ առնելով:

Մամուլ թ: 425, Հոկտ. 15:

25000 ՍՈՎԱՍԱՆՆՔ ՀԱՅԲ.

Եթէ աշխարհի վրայ քաղցր բան մը կայ այն ալ դժբաղդին և անօթիին օգնելն է:

Ասիոյ խորերը մանաւանդ Եօզղատի Կեսարիոյ և Գաղատիոյ կողմերը համաճարակ սով մը տիրել սկսած է այնպէս որ հայրն իր որդին, մայրն իր զաւակն ուտելու պարտաւորեալ են: Եօզղատէն մեզ խրկուած երկրորդ նամակէ մը կը տեղեկանամք որ սովն այս օրերս աւելի սաստկացեր է հոն և տեղւոյն ազգայինը վերջին աստիճան յուսահատական վիճակի մը մատնուելով ամեն օգ-

նուժենէ զուրկ հազարաւոր զրեր թափեր են Պօլիս, Պօլսեցոց զթու թիւնը շարժելու համար:

Յիրաւի սրտախի վիճակ մը դառն է և ցաւալի և ամեն կարգի ազգայնոց զժուժեանը արժանի:

Ուրախ եմք որ Ամեն Ս. Պատրիարք Հօր հրամանաւ 12 անձէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են

Յակոբ	էֆէնտի	Նորատունկեան
Բարսեղ	„	Հալաճեան
Միրտիչ	„	Եսայեան
Առապա	„	Իկիտպաշեան
Տիգրան	„	Ալումիշկէրտանեան
Բարթող	„	Քիւրքճիպաշեան
Մ. Մանուկ	„	Մանուկեան
Յարուժիւն	„	Մէրէճմզուլի
Յովհաննէս	„	Ալումիշեան
Պետրոս	„	Միրասէտիեան
Կարապետ	„	Փալազեան
Սեպուհ	„	Մագսուտեան

Յանձնաժողովն իր երկրորդ նիստն ընելով շարժ օր ի Ղարաթիաւ Ազգին մէջ գտնուած ամեն կարգի վաճառականաց ցանկը պատրաստեց հանգանակութիւն մը բանալու համար. սակայն հանգանակութիւնը կարծեմք բաւական չէ սովելոց համար. այլ անմիջական օգնութիւն պէտք է և այն ուրիշ բանով չկրնար ըլլալ, եթէ ոչ անմիջապէս փոխառութեան զիմելով և ձեռք բերուած գումարը ընդ փոյթ սովելոց խրկելով, Միւս կողմանէ յանձնաժողովն կարող է դարձեալ հանգանակութեան զիմել և զոյացած արդիւնքը փոխառու անձին կամ ընկերութեան հատուցանել:

Յանձնաժողովոյ Մեծ. Անդամք՝ որք բարեսէր և զթած անձինք են, մեր այս առաջարկութեան օգտակարութիւնը կզգան անշուշտ. ուստի կը յուսամք թէ այս մասին հարկ եղածը ժամ առաջ կը տնօրինեն:

Ս. Պատրիարքը գաւառաց Առաջնորդներուն շրջաբերականներ ուղղեց սովելոց համար դրամ հաւաքել և անմիջապէս յանձնաժողովոյ խրկելու համար. սակայն այբարտը բաւական չէ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ալ պէտք է Ռուսաստանի վիճակներուն մէջ հանգանակութիւն մը բանայ և իր դժբաղդ զաւակաց օգնու-

թեան հասնի Բաց սակէ Ազգային երեսփոխաններէն սխալ մինչև էն յետին ազգային պաշտօնեայն տեսուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւնները մայրաքաղաքիս բոլոր թաղ. խորհուրդները պէտք է անմիջապէս միանան և թաղերու մէջ հանդանակութեամբ դրամ հաւաքեն: Այս միջոցներով միայն կարելի է բազմահայ գաւառներէն սովը ջնջել և հազարաւոր անձանց կեանքը մօտալուտ փտանդէն փրկել:

Այն որ մարդասէր է, և ի մասնաւորի այն որ դժբաղդ ազգայնոց կրած ցաւոց վրայ կը կարեկցի պէտք է իրեն ինկած բաժինը վճարէ և վշտահար սրտերն ու լքեալ ազգայինները իրենց ցաւոց մէջ մխիթարէ\*):

Հայրենիք Թ. 224, Հոկտեմբեր 15.

Թ.Ա.Գ.Լ.ՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Հոգեզգօն թաղէոս Լալիսկոպոս՝ Ախալքալաք վիճակի Առաջնորդական Փոխանորդն՝ ի 23 ն ամսոյս մեկնեցաւ աստի երթալ յիւր վիճակ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅ ՏՕՐԵԱՆՑ.

Գ.Կր. Գլխորդը Արքեպիսկոպոս Յօրեանց՝ ի տեղի թաղէոս Ղարղապիտի՝ կարգեցաւ Առաջնորդական Փոխանորդ վիճակին Հին—Նախիջևանի, և ի 26 ն ամսոյս մեկնեցաւ ի Ս. Լջմիաճնէ և զնաց յիւր պաշտօնատեղին:

(\*) Միւս լրագիրներէն ևս կտեղեկանամք որ յիշեալ Յանձնաժողովն փութով 4200 սակ հաւաքած է ի նպատակ սովելոց և արժանը կարգադրած: